

ՏԱՐԵՎԵՐՁԻՆ

Երբէք հայ ժողովուրդը այնպիսի ծանրո ու արհաւրալի օրեր չի ունեցել ինչպէս անցնող դժբախտ 1917 թուին էր։ Անակնկալների շարքեր անցան նրա զլիսվ ու աւերի մատնուած ժողովրդին, ամայացած երկրին հասցրին վերջին ճգնաժամին՝ օրհասական դառն կացութեան։

Համաշխարհային չորրորդ տարին տեսող պատերազմի ընդհանուր ազէտներից անմասն չէ մնացել և հայ ժողովուրդը՝ թէ մարդով, թէ ինչքով նա զոհաբերել է իւր ոյժերիցն վերն անդամը։ Նա իւր մէջ պատսպարել է և բազմահազար հայ անտուն, որը ու տնանկ հայ գաղթականին և շարունակում է իւր սուղ միջոցներից տալ իւր եղբայրներին, այն ինչ կարող է և գուցէ էլ աւելին։

Առասպելական չափերի հասած ու օրէցօր դեռ աճող թանգութիւնը նրան ուժասպան է արել։

Եւ այսօր մենք կարդում ենք ու ականատես ենք, թէ ինչպէս ամեն կողմից սովի ճշեր աղաղակներ են լսում, թէ ինչպէս և տեղացի և գաղթական ժողովուրդը խմբերով այս ու այն հիմնարկութեան, հաստատութեան առաջն են կարում, պահեստների դռները կնքում, ցոյցեր կազմում, որովհետեւ սովը նրանց յուսահատութեան է հասցըել։

Եւ այս դեռ դեկտեմբեր ամսին. իսկ մինչև նոր հունձը ունինք դեռ ևս 5—6 ամիս։

Եթէ աւելացնենք սրա վրայ և այս, որ կովկասին պարենաւորող Հիւսիսային կովկասն էլ ընդհանուր շփոթից անմասն չէ մնացել, որ երկաթուղային հաղորդակցութիւնը

օրերով դադարում է և ով զիտէ թէ էլ ի՞նչ աւելի սոսկալի դրութեան պիտի համենք, կտեսնենք, որ յիշաւի անողորմ սովի սպառնալիքը արգէն մեր մէջն է և դրութիւնը կրիտիքական աւելի, քան ենթադրում ենք:

Այս ամենը գուցէ և կարելի կլինէր մեղմացնել, եթէ Ռուսաստանի անարիւն սկսուած ու վերջը քաղաքացիական սարսափելի կոռուի վերածուած յեղափոխութեան ստեղծած անիշխանական վիճակը չլինէր:

Մեծամասնականների երկրի կառավարութեան ղեկը ձեռքն առնելուց յետոյ կազմալուծուած Ռուսաստանի հսկան մասնատուեց արագօրէն և այժմ գրեթէ իւրաքանչիւր երկրամաս իւր ուրոյն իշխանութիւնն ունի և իրեն չի ճանաչում ենթակայ որ և է իշխանութեան, մինչև Ամանաղիր ժողովի վերջնական գումարումը:

Տարրալուծման գործողութեան մէջ մտաւ և կովկասը, որն ստեղծեց իւր տեղական իշխանութիւնը և որը այժմ կապ չունի կենդրոնի Պետրոգրադի հետ:

Կովկասի այս դրութիւնը անշուշտ անհետեանք չանցաւ հայերի համար, որոնք բացի այն, որ համակովկասեան իշխանութեան մէջ ունեցան իրենց ներկայացուցիչները յանձին այս ու այն կօմիսարի, այլ և ստեղծեցին Ազգային խորհուրդ, որը իրական մարմին է ճանաչուել և այժմ լիազօրուած է այնպիսի պատասխանատու գործ ղեկավարելու, որպիսին է կովկասեան ճակատի պաշտպանութիւնը:

Ռուսաստանի մասնակի հաշտութեան և զինադադար կնքելուց յետոյ, ինչպէս ամեն տեղ այնպէս և կովկասի ճակատում ուսւ զօրքերը թողին ու վերադարձան իրենց տեղերը և ճակատը գրեթէ դատարկուեց: Վտանդը արհաւրալի դարձաւ, որովհետեւ այժմ տաճիկ զօրքի ներխուժման սպառնալիքը տարածուեց ոչ միայն զրաււած վայրերի մէջ գտնուող գաղթականների վրայ, այլ և կովկասի, քանի որ զօրք չկայ պաշտպանող:

Այդ սարսափը, այդ մեծ վտանգն է տարեվերջին ծառացել հայ ժողովրդի առաջ և այժմ Ե. դարու նման

մի տեսակ ընդհանուր գօրակոչ է տեղի ունենում միայն ինքնապաշտպանութեան նպատակով:

Անցնող թուականը հայ ժողովրդի առաջ լինել, շինելու հարցն է դրել և այդ էլ այն ժամին, երբ նրա մեծ հատուածի՝ Տաճկահայաստանի հայ ժողովրդից մի միլիոնը կոտրուել է բարբարոս տաճիկ կառավարութեան ձեռքով, մեացած 5—600 հարիւր հազարը ցրուել է այս ու այն կողմը թափառական, անտէր ու խիլ միւս բաժնի՝ Թուսահայաստանի հայ ժողովուրդը չորրորդ տարին է հիւծւում է ահաւոր պատերազմի բեռան տակ և ուժասպառ է եղել:

Չասե՞նք, որ ճիշտ որ անողոք է ճակատագիրը, ճիշտ որ հայի բախտը ճակատագրական անէծքի տակ է գեռ:

Բայց հայ ժողովրդի համար չսոսկումների թիւը սահման չունի: Եւ ահա այս ճակատագրական ժամին՝ երբ մանուկից մինչև ծերը առանց սեռի խտրութեան դէնքի են կոչւում, Պետրոգրադի մեծամասնական կառավարութիւնը սեպարատ հաշտութեան պայմաններն է մշակում և մանը ազգերի ինքնորոշման հարցը մէջից վերացւում է:

Ի՞նչ պիտի անէ մի բուռն հայ ժողովուրդը հսկայ պետութիւնների դէմ, երբ գերագոյն դէմօկրատիկ սկզբունքների անունից խօսող ու երդուող այս ժամին խիլ հայ ժողովրդի իրաւունքը մոռացութեան է տրւում: Ի՞նչ անէ նա, երբ քրիստոնեայ պետութիւնները օրը ցերեկով մեր աշքի առաջ նոյնիսկ դէմօկրատիայի անունից մանը ժողովուրդների դատն են ոտնահարում ու նրանց բախտը աճուրդի հանում: Խոստովանենք հրապարակով, որ և ոչ մի պետութիւն, թէկուզ ամենադէմօկրատիկը մանը ազգի իրաւունքը ոչ ճանաչում է և ոչ էլ հարկաւոր ժամին պաշտպանում:

Եւ ահա այս սկ տարավերջին տեսնում ենք, որ հայ ժողովուրդը մինչդեռ իր ամեն ինչն է զոհաբերել այս մեծ պատերազմում և ամենից աւելի տուժել ու արհավերքներ կրել, նա առաջներում դադանի դիւանագիտութեան ձեռքին է վաճառքի առարկայ եղել, այժմ էլ հրա-

պարակով է անսպաշտականութեան մատնում ու լքում
ամեն կողմից:

Եկող մեծ յղացումների ծնունդներն իր մէջ ունեցող
տարուն դիմաւորում է միայնակ, իր պատմական ազա-
տագրութեան ծանր խաչը ուսին Գողգոթայի դադաթին
հասած:

Բայց չէ որ Գողգոթան տուեց երկրին Յարութեան
Մեծ տօնը. չէ որ խաչի վրայից տարածուեց Աղատութեան
ու Սիրոյ Մեծ վարդապետութիւնը:

Հայ ժողովուրդը ունի այդ հաւատը և նրա Գողգո-
թան պէտք է տայ և կտայ նրան վերածնութեան՝ Յարու-
թեան Մեծ Աւետիսը:

«ԱՐԵՐԱՏ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Մ. Աթոռի տպարանի բանուորների գործադուլի պատ-
ճառով տպարանում աշխատանքները վերսկսեցին նոյեմ-
բերի 15-ից. ուստի խմբագրութիւնը ստիպուած եղաւ
սեպտեմբեր, հսկուեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիս-
ների «Արարատ»-ի համարները միացեալ հրատարակել:

«Արարատ»-ի խմբագրութիւն.
